ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 206 - Ա

«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող՝ 372,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Սոցիալ-հոգեբանական և տնտեսական աջակցություն» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն.

1) «Օֆիս Պրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00861435) հետ 2022 թվականի մայիսի 5-ին կնքված N 9608BC21 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի

19-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում գրասենյակային և գրենական պարագաների մատակարարում 9,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սոֆադ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00019746) հետ 2022 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված N 6399BC22 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում հիգիենայի պարագաների մատակարարում 3,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Գարանտսերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 00840437) հետ 2022 թվականի նոյեմբերի 15-ին կնքված N 6863BC22 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում 3,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Մաքս Օիլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 02662703) հետ 2023 թվականի դեկտեմբերի 4-ին կնքված N 461200 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում վառելիքի ձեռքբերում 6,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Ասողիկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 09104669) հետ 2023 թվականի հոկտեմբերի 4-ին կնքված N 447742 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում գովազդային ապրանքների տպագրական ծառայությունների մատուցում 9,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Էվրի դեյ» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 01564042) հետ 2022 թվականի հունիսի 24-ին կնքված N RFQ-4906 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի

հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում խմելու ջրի և մեկանգամյա պլաստիկ բաժակների մատակարարում 700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Էյչ Այ Ուայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՀՎՀՀ՝ 01564042) հետ 2023 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված N 450075 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում հյուրանոցային ծառայությունների մատուցում 10,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 02500052) հետ 2021 թվականի դեկտեմբերի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում «Կորպորատիվ VPN և ինտերնետ» ծառայությունների մատուցում 1,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

9) «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 01551651) հետ 2021 թվականի նոյեմբերի 29-ին կնքված N IG-20211113 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում «Կորպորատիվ VPN և ինտերնետ» ծառայությունների մատուցում 1,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2022 թվականի հունվարի 26-ին կնքված N 2616973 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում հետվճարային հեռախոսակապի ծառայությունների մատուցում 5,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Ռայդթեք Էյ Էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության («Յանդեքս. Տաքսի Կորպ Էյէմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն) հետ (ՀՎՀՀ՝ 02274309) 2021 թվականի հուլիսի 26-ին կնքված N 20210078 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում տաքսի ծառայությունների մատուցում 4,500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

12) Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության «Երևան» մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 01520882) հետ 2021 թվականի սեպտեմբերի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարում 8,700,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

13) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության Երևանի ԳԳՄ-ի («Հայոուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերություն, ՀՎՀՀ՝ 00046317) հետ 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված N 016.08.13.2539 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում բնական գազի մատակարարում 5,100,000 դրամի չափով՝առանց ավելացված արժեքի հարկի.

14) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (ՀՎՀՀ՝ 02655115) հետ 2017 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված N 5-14-34 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2024 թվականի փետրվարի 19-ից մինչև 2026 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում 500,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի

հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված, բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

26.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ